Ինքնաճանաչողության կարողունակության ձևավորումը «Հայոց պատմությունը» ուսումնասիրելիս

Մարգարիտա Անտոնյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն
- Մովսես Խորենացի
- Խորենացու թևավոր խոսքերը
- Հայկ Նահապետ
- Արամ արքա
- Արա Գեղեցիկ
- Պարույր Նահապետ
- Տիգրան Մեծ
- Վերլուծություն
- Եզրակացություն
- Օգտ. գրականության ցանկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի կարևորագույն գործառույթներից մեկը հայրենասեր, ազգային արժեհամակարգը գնահատող և պահպանող սերունդ կրթելն է: Իսկ հայրենիքը և ազգային արժեքները կարելի է պահպանել այն դեպքում, երբ լավ գիտես և ճանաչում ես ինքդ քեզ, հայրենիքդ և ազգային արժեհամակարգդ:

Դարեր շարունակ Մովսես Խորենացու <<Հայոց պատմություն>> աշխատությունը, ծառայել է նաև որպես ինքնաճանաչողության դասագիրք: Այն համարվում է մեր ժողովրդի <<ծննդյան վկայական>>, քանի որ մեծ պատմիչը սկսել է իր պատմությունը ժողովրդի ծագումից սկսած մինչև իր ապրած ժամանակները՝ քննադատաբար մոտենալով մեր պատմության ընթացքում գոյություն ունեցած թերություններին, սխալներին: Չի զլացել փառաբանել նաև մեր հերոս նախնիների հերոսական արարքները:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ



Քերթողահայր Մովսես Խորենացին ծնվել է 410թ-ին Տարոն գավառի Խորոն գյուղում: Վաղ հասակում նա գնացել է Վաղարշապատ, որտեղ աշակերտել է Սահակ Պարթևին և Մեսրոպ Մաշտոցին: Հայերենից բացի Խորենացին տիրապետել է հունարենին և ասորերենին: Նա զբաղվել է գրական աշխատանքով, կատարել թարգմանություններ, գրել <<Հայոց պատմություն>> երկը, որը դարեր շարունակ եղել է ազգային ինքնաճանաչման, քաղաքական- հայրենասիրական դաստիարակության ուսումնական ձեռնարկ: Հայ սերունդները մեծարել են նրան «Պատմահայր», «Մեծն Մովսես», «Քերթողահայր» և այլ պատվանուններով: Մովսես Խորենացու անունով Երևանում և ՀՀ այլ քաղաքներում կոչվել են փողոցներ, բուհ, կանգնեցվել են նրա հուշարձանները:

ԽՈՐԵՆԱՑՈՒ ԹԵՎԱՎՈՐ ԽՈՍՔԵՐԸ

- Քաջերի սահմանը իրենց զենքն է, որքան կտրի այնքան էլ կտիրի:
- Ինչն մարդնու ու նրա գործերն են, այն էլ նրա պատմությունն է:
- Մահկանացուների ժամանակը կարճ է և անհայտ:
- Քաջերի սերունդները քաջեր են:

ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Հայկը հայ ազգի նախահայրն է: Խորենացու հայտնի աշխատությունը սկսվում է Հայկ Նահապետի առասպելով: Ժամանակի ընթացքում այս առասպելը վերածվել է դյութազնավեպի: Ըստ Խորենացու՝ Հայկը վայելչակազմ և գանգրահեր դյութազուն էր, ով թույլ չտվեց, որ Բելը հպատակեցնի հայերին: Որոշիչ ճակատամարտի ժամանակ Հայկը իր նետով սպանում է Բելին և հիմնում է Հայքը: Եթե զուգահեռներ անցկացնենք հայկական էպոսի հետ, ապա կհասկանանք, որ Հայկի և Սասունցի Դավթի արտաքին տեսքի նկարագրությունները գրեթե ոչնով չեն տարբերվում: Նույնը նաև կարող ենք ասել Վահագն աստծո և Արա Գեղեցիկի մասին: Այսինքն մեր մշակույթի մեջ դաջված է այն կարծրատիպը, որ խիզախ և քաջ կերպարները պետք է լինեն վայելչակազմ, գանգրահեր, ազատատենչ և այլն:

ԱՐԱՄ ԱՐՔԱ

Ըստ Խորենացու՝ Արամի մասին պատմում են <<Քաջ գործեր է կատարել հաղթական պատերազմներում և ընդարձակել է Հայաստանի սահմանները բոլոր կողմերից>>: Նրա անունով էլ բոլոր ազգերը անվանում են մեզ և մեր հայրենիքը: Արամ արքան Ասորեստանի հետ պատերազմելիս գերեվարվում է: Այնպես է ստացվում, որ նրա ազատության դիմաց Նոսոր արքան առաջարկում է տասը օր քաղցած մնալուց հետո մրցել իր հետ նետաձգության մեջ: Արամին իր ծառաները ամեն օր կերակրում են՝ լանջապարկի մեջ տեղադրելով նրբաթերթ լավաշներ: Նոսոր արքան մրցույթի օրը զարմանում է, թե ինչպես է արքան կարողանում իրեն հաղթել, բայց իր խոստումը պահելով՝ արքային իր երկիր է ուղարկում: Մեր ազգի պատմության մեջ շատ են հանդիպել դեպքեր, երբ հայերը դժվարին իրավիճակներից դուրս գալու համար կիրառել են ոչ միայն իրենց ուժը, այլև իրենց խելքը և հնարամտությունը:

ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ

Արա Գեղեցիկը Արամ թագավորի որդին էր, ով պատմության մեջ հայտնի է <<Արա Գեղեցիկ և Շամիրամ>> առասպելի շնորհիվ: Բայց շատ քչերը գիտեն, որ Արան հայ հին դիցաբանության մեջ հայտնի է եղել որպես մեռնող և հարություն առնող աստված: Հայկական հին տոմարի մեջ տարվա վեցերորդ ամիսը կոչվել է Արաց: Այս թագավորի պատվին նաև անվանվել են մի շարք տեղանուններ. օրինակ՝ Արագած, Արայի լեռ, Արայի գյուղ և այլն: Արայի կերպարը բազմիցս շոշափվել է հայ ժողովրդի կողմից անգամ քրիստոնեություն ընդունելուց հետո, բայց այս անգամ, որպես հայ ազգի բարեպաշտ, քաջ և հավատարիմ արքա:

ՊԱՐՈՒՅՐ ՍԿԱՅՈՐԴԻ

<<Ահա այժմ ես կուրախանամ՝ ոչ փոքր խնդություն զգալով, որ հասնում եմ այն տեղերը, ուր մեր բնիկ նախնիի սերունդները թագավորության աստիճանի են հասնում>>, ասել է Մովսես Խորենացին: Նաև նշել է, որ <<Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ... աշխարհ եկած լինեի, նրանց տերությամբ զվարճանայի և այժմյան վտանգներից խուսափած լինեի>>: Պարույր Նահապետը հիմնել է հայկազունի-երվանդունիների թագավորությունը, որը հայկական առաջին թագավորությունն էր: Այդ իսկ պատճառով Պարույր Սկայորդին համարվում է Խորենացու ամենասիրելի պատմական կերպարներից մեկը:

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ

Հնարավոր չէ անդրադառնալ Խորենացու հանրահատ աշխատությանը, առանց նշելու հայոց հզորագույն արքա Տիգրան Բ Մեծին: Տիգրան Մեծի օրոք Մեծ Հայքի թագավորությունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Պարտության մատնելով Պարթևստանին և ստանալով Սելևկյան գահը՝ Հայքը կարճ ժամանակով դառնում է Առաջավոր Ասիայի հզորագույն պետությունը, որի տերությունը տարածվում էր Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով, Կովկասյան լեռներից մինչև Միջագետքի անապատները: Հայերի մեծագույն երազանքը թեկուզ ժամանակավոր իրականացնելով՝ Տիգրան Մեծը վերածվեց հայերի հպարտության խորհրդանիշի: 23 միջազգային կոմպոզիտորներ, այդ թվում նաև Վիվալդին մեր արքային նվիրված ստեղծագործություններ ունեն: Ճիշտ է, մի փոքր ժամանակագրական վրիպակով, բայց աշխատության մեջ ներկայացվել է Տիգրանի խրոխտ և բարեպաշտ կերպարը:

ՈՂԲ

Կարևորելով ինքնաճանաչողության կարողունակությունների ձևավորումը չի կարելի շրջանցել երկի վերջաբանը՝<<Ողբը>>: Մովսես Խորենացու հայրենասիրության և ստեղծագործական մտքի փայլուն արտահայտություններից է «Ողբը», որը զետեղված է «Պատմություն Հայոց» երկի վերջում՝ որպես եզրափակիչ գլուխ:Սա մեզ հասած գրական ողբի հնագույն նմուշն է,որով սկզբնավորվում է միջնադարում լայն կիրառություն գտած ողբերգությունը:Խորենացին այստեղ տալիս է Հայաստանի պետականության վերացման հետևանքով հայ իրականության մեջ ծայր առած քաղաքական անկման,ազգային և հասարակական կյանքի բոլոր բնագավառներում առաջ եկած բարոյալքության խտացված պատկերը: Բայց սրանք չարակամ որակումներ չեն,այլ երկրի հարազատ զավակի ցավատանջ հոգուց պոկված ծանր,բայց անկեղծ հառաչանքներ,որ երկար տարիներ կուտակվել են նրա կրծքի տակ՝ հայրենիքի կործանման տխուր գիտակցությունից:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Անցնելով մեր պատմության փառավոր էջերով, ոգեշնչվելով մեր նախնիների ազատասիրությամբ, արդարամտությամբ, հնարամտությամբ և քաջ գործերով՝ պետք է խելամտորեն յուրացնել դրանք: Հայ ժողովուրդը ինչպես Խորենացու ապրած ժամանակ, հիմա ևս գտնվում է ծանրագույն վիճակում և դրանից դուրս գալու լավագույն միջոցը անցյալի սխալներից դասեր քաղելն է: Խորամիտ են եղել մեր նախնիները և հատկապես Խորենացու սիրելի ուսուցչի՝ Մաշտոցի միտքը՝ << Ճանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ>>, պետք է ուղեցույց լինի մեր հետագա սերունդների համար:



ՕԳՏ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Aramminas. “Արամ Արքա.” Արամ Մինասսյան, 29 May 2020, https://aramminassian.wordpress.com/2020/05/29/%D5%A1%D6%80%D5%A1%D5%B4-%D5%A1%D6%80%D6%84%D5%A1/.

Elenbabayyan. “Հայկ և Բել Առասպելի Վերլուծություն.” Էլեն Բաբայան, 19 Sept. 2020, https://elenbabayyan.wordpress.com/2020/09/19/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%AF-%D6%87-%D5%A2%D5%A5%D5%AC-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BD%D5%BA%D5%A5%D5%AC%D5%AB-%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/.

“The Heritage of Armenian Literature: From the Oral Tradition to the Golden Age.” Google Books, Google, https://books.google.am/books?id=uvA-oV0alP8C&pg=PA66&dq=Ara%2BArmenian%2Bdeity&hl=en&ei=IzMFTaCkLsmEOoO9xaYB&sa=X&oi=book_result&ct=result&resnum=1&ved=0CCYQ6AEwAA#v=onepage&q=Ara%20Armenian%20deity&f=false.

АССИРО-ВАВИЛОНСКИЕ ИСТОЧНИКИ ПО ИСТОРИИ УРАРТУ. https://elib.gsu.by/bitstream/123456789/10028/1/%D0%94%D1%8C%D1%8F%D0%BA%D0%BE%D0%BD%D0%BE%D0%B2_%D0%92%D0%B5%D1%81%D1%82%D0%BD%D0%B8%D0%BA_1951_2.pdf.

“Արա Գեղեցիկ.” Www.dasaran.am, https://www.dasaran.net/apps/wiki/view/id/4894.

Գրիգորյան, Автор Մարիամ. “Պարույր Նահապետ.” Մարիամ Գրիգորյանի Բլոգ, 24 Sept. 2019, https://margrigoryan.wordpress.com/2019/09/24/%D5%BA%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D6%80-%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BA%D5%A5%D5%BF/.

Շնորհակալություն ուշադրության համար